



**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿԱՆԴԱԿՆ ԿՈԳԵՇՆՈՐ Հ. ՇՆՈՐՀՔ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ
ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ
ԱՌ ՎԱՍՏԱԿԵԱՆ ՍՊԱՍԱԴՈՐՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ
ԿՈԳԵՇՆՈՐ Հ. ՇՆՈՐՀՔ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ,
ՈՐ Ի ՌՈՏ ԱՅԼԸՆՏ, ԱՄՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում երկարամեայ նուիրեալ ու անձնդիր Ձեր սպասատուութեան համար:

Սիրելի Հայր Սուրբ, չորս փասնամեակ առաջ խորին խոնարհումով Բարձրեալ Աստուծոյ առջեւ անմնացորդ ծառայելու ուխտ կնքեցիք՝ սրանձնելով հայ եկեղեցականի դժուարին, բայց միաժամանակ քաղցր պարտաւորութիւնը:

Այսօր ուրախ ենք անդրադառնալու շնորհաշար եւ բազմավաստակ հոգեւորականիդ ազգօգուտ ու եկեղեցաշէն գործունէութեանը, որ արդիւնատուութեամբ է աստուածահաճոյ գործերով ու նախաձեռնութիւններով: Մենք առանձնակի սիրով ենք յիշում Մեր ուսումնառութիւնը Գեւորգեան Հոգեւոր Ճեմարանում՝ Ձեր րեսչութեան ներքոյ, երբ մուրբ գործելով հոգեւոր ասպարէզ, ականաբես եղանք Ձեր նուիրումին առ Հայոց Եկեղեցին ու վայելեցինք Ձեր հոգածու վերաբերմունքը Եկեղեցու ապագայ սպասատրներին հանդէպ: Ամենուր Ձեր ծառայութեան մէջ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Կոստանդնուպոլսի ու Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւններում, ԱՄՆ Արեւելեան ու Կանադայի հայոց թեմերում Դուք դրսեւորել էք Ձեր անխախտ հաւա-

փարմությունն ու նախանձախնդրությունը Տիրոջ սպասատրի սուրբ կոչման նկատմամբ:

Ձեր հաւատքի եւ հայրենանուիրութեան նոր վկայությունն է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հաստատուող ծերանոցի հովանաւորութեան սրանձնումը եւ այս նպատակով կատարուած մեծագումար նուիրաւորությունը: Հայրենի մեր երկրի ներկայ սոցիալական դժուարութիւնների պայմաններում բարեգործական այս հաստատությունը իր կարեւոր նշանակությունը պիտի ունենայ միայնակ ու կարիքաւոր քաղցրեցների կեանքում՝ զօրացնելով նրանց յոյսն ու լաւատեսությունը առ Բարձրեալն Աստուած:

Միրելի Հայր Սուրբ, Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ի Գ Ո Ր Լ Ո Ւ Մ Ա Ւ Ո Ր Ի Չ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ պիտի շարունակէք նոյն եռանդով ու պատրաստակամութեամբ ծառայել հոգեւոր սպասատրութեան նուիրական գործին՝ ի մխիթարութիւն հաւատաւոր մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեր սրտաբոխ աղօթքն է, որ Բարին Աստուած Իր հովանաւոր Աջը զօրավիզ ու մարտակից դարձնի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, բարի գործերով եւ մնայուն ձեռքբերումներով լեցուն երջանիկ ծառայութիւն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Օգոստոսի
յամի Տեառն 2002 եւ ի թուին հայոց ՌՆԾԱ
ի Մայրականս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 101